



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.


պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ



ԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆՔ

ԱԶԳՍՅԻՆ ԺՈՂՈՎՈՅ

ՔԱՅՈՒՄ 1876 ԱՄԻՆ

ՆԻՍԻՍ Բ,

21 ՄԱՅԻՍ 1876



ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ս. ՄԻԲՆԱԿԼԻԱՆ

1876

ՄԱՅՐ ԴԻՒԱՆ

Ստեփանն Արարանեան	Քաղաք	Ա. ԱՅՆԱԳՅ
Ռուսինեան	Էֆէնտի	Ք. " "
Տիգրան Երուսաղեմեան	Էֆէնտի	Ք. " "
Գարեգին Յ. Մեղիքեան	"	Ա. ԱՅՆԱԳՅ
Համբարձում Ս. Ալաճանեան	"	Ք. " "
Առաքել Ալմուսնեան Տիրոջ	"	Ք. " "

ՉԵՌՆՀԱՍՈՒԹԵԱՆ ԴԻՒԱՆ

Տ. Յովհաննէս Ք. Մկրտան
Տ. Գրիգոր Ք. Աճառեան
Ասրղիս Արարեղեան

ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԴԻՒԱՆ

Յովհաննէս Կուրեան	Էֆէնտի
Գ. Երզ Ստեփաննեան	"
Պարս Պատնասեան	"

ԿԱՂՈՒՄՐՈՅ ԴԻՒԱՆ

Յովհաննէս Աղաւորեան	Էֆէնտի
Ստեփանն Պէլլիճեան	"
Յակոբ Քաղաղեան	"

ՅԱՐԱՐԵՐՈՒԹԵԱՆ ԴԻՒԱՆ

Տիգրան Երուսաղեմեան	Էֆէնտի
Օգոսն Խօժապարեան	"
Նազարէթ Շահապեան	"

ՀԱՄԱՐԱԿԱՂՈՒԹԵԱՆ ԴԻՒԱՆ

Համբարձում Մազարեան	Էֆէնտի
Եղիազար Մելիքեան	"
Յարութիւն Մէրեճ-Պալի	"

ԻՐԱՄԱՍՈՒԹԵԱՆ ԴԻՒԱՆ

Տ. Ներսէս վարդապետ Արարանեան	
Կարապետ Շահապեան	Էֆէնտի
Նան Քաղաղեան	"

ՆԱԽԱՉԵՌՆՈՒԹԵԱՆ ԴԻՒԱՆ

Միքայէլ Մամիկոնեան	Էֆէնտի
Ռուսինեան	"
Առաքել Ալմուսնեան	"

ԻՄՐԱԳՐՈՒԹԵԱՆ ԴԻՒԱՆ

Կարապետ Խիւճեան	Էֆէնտի
Պետրոս Քելարեան	"
Ստեփանն Փարապեան	"

ՕՐԱԿԱՐԳ

- Ա. Քնարութիւն Նախաքննիչ դիւանաց :
- Բ. Քնարութիւն Հանարատրեան յանձնարարի :
- Գ. Քնարութիւն Ելեւոսից յանձնարարի :
- Դ. վերակազմութիւն վարչութեան :
- Ե. վերաքննութիւն Սահմանադրութեան . — վիճարան քիւն Բ. Երուսաղեմի վրայ , որ է Թագական մատակարարութիւն :

ԱՏԵՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՔ

Ատեանը բացուեցաւ ժամը Տիւն 'ի ներկայութեան 48 երեսօտիւնաց , որոց թիւն 'ի վերջոյ յանգեցաւ 64 ի :

Չ.

Քննարկութիւն նախքան յանձնարարութիւն կրեք նիտերու և ներկայ յանձնարարութեան և նիտի սահմանադրութեանց :

Ատենապետ Փաշան ծանուցանելով թէ Ժողովն վաւերաւոր յարգաւոր սահմանադրութիւնը թուով չորս են , նախ՝ երեսօտիւնները նախընթաց բացման վերջին երեք նստերու տեսնադրութեանց վրայ ի դիտողութիւն հրատարակել ետեւ , տեսնելով որ դիտողութիւն ընող չի կայ , անմիջապէս քուէի դրաւ նոյն երեք տեսնադրութիւններն , որք ԸՆԴՈՒՆՈՒԵՑԱՆ Ժողովն :

Յետոյ՝ ներկայ բացման առաջին նիտի տեսնադրութեան վրայ ի դիտողութիւն հրատարակել երեսօտիւններն :

Այս միջոցին Փարապեան Ստեփանն Էֆ. դուրսէն գալով և քաղաքիկաւ երեք տեսնադրութեանց մասին դիտողութիւն ունենալը յայտարարեց :

ներս , որահանջեց որ իւր դիտողութիւններն ընէ , յաւելցնելով թէ նոյն տեսնադրութեանց ի դիտողութիւն դրաւ առհասարակ ներկայ չգրաւ նախն ոչ թէ զանցառութեան սրտաճառու էր , այլ վրան դի Սրբազան Պատրիարք Հօր հրամանաւ դուրս ելած էր նորընտիր Կայսեր վերադարձի պահուն կեղեցեաց կողմանէ հանդիսաւոր կերպիւ դիմաւորելու Նորին Վեհափառութիւնն ինչպէս որ այն վոյրկեանին կատարուած էր :

Աստիցն Ատենապետ Փաշա արդիւնէ ըսելով թէ նոյն տեսնադրութիւնը Ժողովին քուէովն ընդունուելէ ետեւ կարելի չէ այլ ևս դիտողութիւն ընել , և այս մասին հարցաց նաև Ժողովին կամքն՝ որ համաձայն զանուեցաւ Ատենապետ Փաշային :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՑ. — Եթէ թոյլ չարդարեւ ինձ տեսնադրութեանց վրայ ունեցած դիտողութիւններս յայտնելու , գոն թմուր արձանադրութիւնն ունենալու և ինչ պատճառաւ արդիւն իր :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Ես առաջին այդ խօսքերը կործանադրութիւն : Հիմա կարգը՝ ներկայ բացման Ա. նախ տեսնադրութեանն է . անի՛ր այս մասին դիտողութիւն :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՑ. — Այո , անի՛ր . — Երես 6 և սինակ Բ. Խօժապարեան Էֆ. ինչ Գաղատիոյ Արքեպիսկոպոսին կախարարին համար

ըսած խօսքին ետև , ձայներ գրուած կան . իմ ձայնս էր միայն և ոչ ուրիշին , զոր հարկ է ուղղել :

Գիտողութիւն մ'ալ ունիմ այն տիրոջ բառին վրայ , որ անուշադրութեամբ մտած կերևի Սրբազան Պատրիարք Հօր բացման ճառին մէջ , յորում գրուած է մեր ազգէն և տիրոջ ազգէն :

Անընդունելի է ըստ իս և անգրասէ տիրոջ բառին հան դրուելը , և չեմ կարծեր որ ՍԸՐՐԱՊԱՆՆ ԱՅՉ ԲԱՐԱՆ ԸՍԱԾ ԸԼԻՄ :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ . — Սրբազան Հայր , ըսի՞ք այդ բառը :

Ս . ՆԱԽԱԳԱՀ . — Եթէ ըսած չըլլայի չէր արձանագրուէր :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ . — Ո՛րեմն խմբագրական սխալ մը չկայ այդ մասին . դուք՝ Փափազեան է՞ք . խմբագրութեան մասին միայն զխաղաղութիւննիդ ընելու էք սցփմ , իսկ ուրիշ զխաղաղութիւն ևթէ ունիք՝ ատենագրութեան վտերացուելէն ետքը կրնաք ընել :

Զայս ըսելով Ատենապետ փաշան քուէի գրաւ նախընթաց Ա . նստի ատենագրութիւնը և Ժողովը դայն ԸՆԴՈՒՆԵՑ :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ . — Այժմ խօսքը՝ Փափազեան է՞ք , ձերն է , եթէ ունիք ըսելիք :

ՓԱՓԱԶԵԱՆ Ս . ԷՑ . — Պահ մը առաջ ըսածներս կը կրկնեմ , անպատեհ կը համարիմ տիրոջ ազգ բառերուն գործածութիւնը մեր ատենագրութեան մէջ . եթէ Սրբազանն արտասանած ալ ըլլայ , դարձեալ սխալմունք մ'է ատենագրութեան մէջ անցնել , վասն զի նոյն իսկ այն ուղղն՝ որոյ համար այդ տիրոջ բառը գործածուած է , իւր արաշածուողոց մէջէն վերցուցած է նոյն բառն , ինչո՞ւ մեր այս ստաշոնական զիրքին մէջ մեք գործածենք :

Ասկէց զատ ուրիշ ըսելիք մ'ալ ունիմ , Անցեալ նստին դուք էիք՝ Ատենապետ Փաշա , որ Սրբազան Պատրիարք Հօր բացման ճառին ի պատասխան Ժողովոյս կողմէ ուղերձ մը արտաբառեալ սկէտքը ծանուցիք : Սակայն Ժողովըս ուշադրութեան չառաւ այդ կէտը . ես կառաջարկեմ յանձնաժողով մը դնել , Սրբազան

Հօր ճառին պատասխանը պատրաստելու համար , մանաւանդ որ անոր մէջ բննադատութեան արժանի կէտեր կան , որք եթէ չբացատրուին՝ չըփոխ կը մնան :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ . — Իմն առաջարկութիւն չէր , այլ ցու յայտնել էր միայն՝ որ մեր Կանոնադրութիւնը չէ ցուցուցած մեզ արամագրութիւն մը նախադասական ճառին պատասխանող ուղերձ մը պատրաստելու : Գուք կառաջարկէք Ժողովին՝ նկատողութեան ասնուլ այս կէտը . շատ ազէկ . սկէտք է ըստ կանոնի գրով մատուցանէք առաջարկութիւննիդ , որ սկէս զի Գեւանա կարող ըլլայ ներկայացնել յուշադրութիւն Ժողովին :

2.

Բացակայութիւն

Ատենապետ փաշան ծանուցանելով Ժողովին թէ երեսուխամներէն Եանարաջ Նաղարէթ և Մխարեան Խաչատուր է՞ք նստիները նամակ գրելով՝ առաջինը ճանապարհորդութեան և երկրորդը սկարութեան արտաճառաւ բացակայ մնալու ստիպուած ըլլալնին յայտնած են , նշանակել սուաւ ներկայութեան առմարին մէջ :

3.

Հրամարական

Ատենապետ Փաշան նոյնպէս ծանուցանելով թէ Բերկասէճեան Պկարսու է՞ք նստին հրամարական գրիպն է , հրամարագիրը կարդալէ ետև իրրե սարզ հրամարական բուէի գրաւ , և Ժողովը միաձայնութեամբ անընդունելի դասեց :

Գիւանը Սրբազան Հօր յանձնարարեց Բերկասէճեան է՞ք . ինչ հաղորդել Ժողովոյ քուէին արդիւնքը և հրաւիրել որ իւր արաշտենն ազգասիրտար շարունակէ :

4.

Վերջին տեղեկագիր Ս . Պատրիարք Հօր առաջարկութեանց Քննիչ Յանձնախմբին :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ . — Նախընթաց բացումէն մնացած երկու տեղեկագիր անիմք , որոց սրտածէնները վերջին նիստի ասենագրութեան մէջ արձանագրուած ըլլալով արդէն ծանօթ են Ժողովոյդ , և որոց մէկն է Սրբազան Պատրիարք Հօր առաջարկութեանց Գննիչ յանձնախմբին վերջին տեղեկագիրը . իսկ միւսն է նոստող Խրաւասութեան զիւանի տեղեկագիրն երեսուխամն Այվատեան Մատթէոս է՞ք նստի պատճառարանեալ հրամարականի մասին :

Յանձնախմբին տեղեկագիրը չորս մասունք կը սրբուենակէ , այսինքն՝ Սրբազան Պատրիարք Հօր երեք հորցմանց և մէկ առաջարկութեան պատասխան կուտայ . ահաւասիկ առաջինը . (և կարդաց տեղեկագրին մէջէն հետեւեալը) .

« Այն եկեղեցականաց մասին , որոնք առանց բանաւոր արտաճառի իրենց կոչուած տեսող չեն կամիր երթալ ըստ նուիրապետական կարգաց Հայաստանեայց Ս . Եկեղեցոց , « Յանձնաժողովս կառաջարկէ որ այն խնդիրն որոտ որում կրօնական՝ յղել առ Կրօնական « Ժողովն , որ եթէ ինքնին չըկրնայ կարգադրել « Սահմանադրութեան 29րդ յօդուածին համա « ձայն սկտք է զիսէ Եկեղեցական Համագու « մար Ժողովին և ըստ նորա անօրէնութեան » անձնագանդներուն վրայ հարկ եղած պատիմն « ի գործ դնէ » :

Նախ՝ տեղեկագրին այս առաջին կէտին վրայ ուշադրութիւննիդ կը հրաւիրեմ . եթէ յանձնախմբին առաջարկութիւնը կընդունիր բարի . իսկ թէ որ զխաղաղութիւն անիք՝ սկէտք է Օրակարգն անցնի և վիճարանութեան որ որոշուի :

ԻՌԹԻՒՃԵԱՆ 4 . ԷՑ . — Կառաջարկեմ որ Օրակարգն անցնի այս խնդիրը :

ՔԱԶԱԶԵԱՆ 6 . ԷՑ . — Օրակարգն անցնի , բայց այսօր չնայուի . որովհետև այդ խնդր

մէն աւելի ստիպողականները կան արդէն Օրակարգին մէջ , ինչպէս են Նախարանիչ զիւանաց ընտրութիւնն ու Վարչութեան վերակազմութիւնը , կառաջարկեմ որ այսօր անօրէնագրութեանց գործերուն անցնինք :

Ատենապետ Փաշան տեսնելով որ հակառակ առաջարկութիւն չկայ , Օրակարգն անցնելու առաջարկութիւնը բուէի գրաւ , որ միաձայնութեամբ ԸՆԴՈՒՆԵՑԱԼ :

Իսկ ստիպողականութեան դալով , Ատենապետ փաշան հորցուց Սրբազան Նախագահին , սրտհետև խնդրոյն տերն էր , և Նորին Սրբազնութիւնը յայանեց թէ կրնայ յետաձգուիլ այս առար համար :

Ատենապետ Փաշան տեղեկագրին երկրորդ մասն սկտաւ կարդալ : Եւ դեռ չաւարտած՝ Փախազեան Ստեփան է՞ք նստի ընդմիջելով առաջարկեց որ տեղեկագրին ամբողջութեամբ Օրակարգն անցնի :

Այս առաջարկութեան դէմ զխաղաղութիւն ընող չըլլալով , Ժողովն ԸՆԴՈՒՆԵՑ տեղեկագրին մնացեալ մասանց ընթերցումն ետ ձգել և տեղեկագրին ամբողջ Օրակարգն անցնել :

5.

Տեղեկագիր Խրաւասութեան զիւանի ի վերայ պատճառարանեայ հրամարարի Եյվատեան Մարտէոս է՞ք նստի :

Նամակէս այն տեղեկագիրն ալ առանց ստիպողականութեան Օրակարգն անցնել ՈՐՈՇՈՒՆԵԱԼ :

6.

Պատասխանագիր Բ . Կրան ի վերայ Աղբաւարայ Խնդրոյ :

Ատենապետ Փաշան ծանուցանելով թէ նախորդ նստին Սրբազան Նախագահին առաջարկութեան վրայ զիւանը յատենի Ժողովոյ խաւապած էր այն պատասխանագրին ընթերցուիլն այսօրեայ ասենական գործողութեանց

կարգն անցնել, առաջարկեց որ կարգացուի:

Յիշեալ պատասխանագրին Հայերէն թարգմանութիւնը կարգացուեցաւ, որ է:

[Թարգմանութիւն]

Աղթամարայ արանեալ Պետրոս կաթողիկոսին յաջորդող և սպանութեան խնդրոյն համար ասկից 13 տարի առաջ Պոլիս բերուող խաչատուր Արքայանին նկատմամբ ինչ ինչ խնդիրներ սրարւնակող ձեր պատասխանագիրը նկատուած թեան առի՝ Էջ ինչպէս որ ձեր Արքայանութեան գրութեան խնայողը կը յայտնէ որ խաչատուր Արքայան Պատրիարքարանի բնութեւնէն և երգմամբ բրած յայտարարութեանն անպարտ երկցած է, նմանապէս ասկից ստաջ տեղական կառավարութեան ուղղուած գրութեան վրայ եկած պատասխանագրէն հասկըցուած է որ խաչատուր Արքայանին կասկածեալ մասնակցութեան վրայոր վճիռ արձակելու բաւական ծայր մը չէ կրցեր առնուի: Հետեալ բար իրաց այս վիճակին մէջ եթէ խաչատուր Արքայանին անարարութեանը մասին ձեր ՍԵՐՐԱՊԻՆԻՆԻ Համոզուի, Բ. Ղուան ալ ըսեալիք չունենար, որոյ համար այն ծանուցագիրը գրուեցաւ ի զիտութիւն:

Ատենապետ Փաշան՝ այս խնդրոյն այս օրուան համար ստիպողականութիւն չունենալը Արքայան Նախագահէն և Ժողովին ստուգելէ վերջ, հարցոց թէ ի՞նչ բնեւ պէտք է:

ԵՒՄԷՆԻՃԵԱՆ Յ. ԷՖ. — Աղթամարայ խնդիրն Աղգային Ժողովս Վարչութեան յԵԼՆՈՒՄԸ կը արդէն. կառավարեալ որ նորէն յԵԼՆՈՒՄԸ Վարչութեան ի պատշաճ անօրէնութիւն:

ՈՒՐԻՇՆԵՐ. — Օրակարգն անցնի: ԱՅՆԵԱՊԵՏ ՓԱՇԱ. — Ուրեմն երկուք և զու կարծիքները: Մէկն է Օրակարգն անցնել և միւսն առ Վարչութիւն վերադարձնել խնդիրը: Քուէն պէտք է որոշէ այս երկու առաջարկութեանց մին:

Հայս ըսելով Ատենապետ Փաշան քուէի գրու յիշեալ երկու առաջարկութիւնները, և

7 ձայնի դէմ 25 ձայնով ՈՐՈՒՇՈՒՆՆԵԱՒ Օրակարգն անցնել Աղթամարայ խնդրոյն վերաբերեալ Բ. Ղուան պատասխանագիրը:

Պ

Քողարգի կրօն. Ժողովոյ անդամ Տ. Երեմիա քահանայի խառնիցոյ:

Ատենապետ Փաշան Արծաթեան ժողովոյ անդամ խառնիցոյ Տէր Երեմիա քահանայի կողմէն բողոքագիր մը մատուցուած ըլլալ յայտնելով կարգացոյցն, որ է:

Վսեմապետ Փաշա Ատենապետ Աղգ. Ժողովոյ

Յու օր սրաի կարգացի Աղգային ժողովոյ նախորդ բացման մարտ 26 թուականու վերջին նախն Ատենապետութեան վերջին երեւին մէջ որն որ մայիս 7 ին հրատարակուեցաւ, 5 երեսփոխանաց այն բողոքագիրը, որ մարտ 12 թուականու ներկայացուցեր են Ձեր վսեմութեան: Սոյն բողոքագիրը իմ անձիս դէմ է, իբր թէ ես երեսփոխան չըլլալով՝ փետրվար 20 ի քուէարկութեան մասնակցեր եմ, և այդ բողոքող Մեծ. Երեսփոխանները նոյն օրը տեսեր են:

Յու օր սրաի կարգացի կրեմ, որովհետեւ մեծ սխալ մ'է որ կընեն ինձի դէմ Աղգ. Ժողովոյ նախն բարձր Ատենի մ'առջև, որոյ նիստերը ժողովրդեան առջև բաց են, և առեմա գրութիւններն ալ ընդհանուր աղգին կը ներկայանան: Տարօրինակ յանդիմութիւն մը կը լար, եթէ ես երեսփոխան չըլլալով մասնակցելիս և է քուէարկութեան մը. բայց ես իբրև Արծաթեան ժողովոյ անդամ՝ Սահմանադրութեան 58րդ յօդուածին զորութեամբը Աղգ. Ժողովոյ ստանէն աւելի նիստիբան ներկայ գտնուած եմ առանց ստորագրելու ներկայութեան տուժարը և առանց քուէ տալու, վասն զի երեսփոխան չըլլալս գիտելի, Ժողովոյ մէջ խօսելու իրաւունքս անգամ գործադրած չեմ, ուր մնաց որ քուէ տայի: Ըստ այսմ փետրվար 20 ի քուէարկութեանն ալ մասնակցած չեմ:

ինչպէս նաև Աղգ. Տ. Չարարիս վարդապետ եղբայրն ալ նոյն ժամուան ներկայ կը գտնուէր, նա ալ ինձ պէս երեսփոխան չըլլալով՝ չմտնակցեցաւ այն քուէարկութեան, որն որ երկիցս ձեռամբարձով ըլլալէ վերջը՝ երանխառով կատարուեցաւ:

Աստի տարօրինակ բողոք մ'է այդ Մեծ. Երեսփոխանաց ըրածը, իբր թէ զիս իմ ձեռքով ալեօրս սորի վրայ կանգնած և նոյն բողոքագիրութեան մասնակցած տեսեր են: Հետեալ բար անոնց այս բողոքին դէմ ես կը բողոքեմ, և իմ պատուս հասուցում կը պահանջեմ:

Մնամ յարգանք Անդամ Աղգ. Արծաթեան ժողովոյ 10 Մայիս 1876 ԵՐԵՄԻԱ ՓԱՆԱՆՅԻ ԽՈՍՏԻՆՅ

ՔԱՋԱՋԵԱՆ Յ. ԷՖ. — Կառավարեալ որ այս ալ Օրակարգն անցնի:

ՔԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Քողարգեան էջ կարծեմ դուք ալ բողոքողներէն մէկն էք այս քահանային դէմ:

ՔԱՋԱՋԵԱՆ Յ. ԷՖ. — Այո, ես ալ բողոքած եմ:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Ներկայէ խնդրոյն վրայ բացատրութիւն մը տամ: Սակէ յառաջ Սահմանադրութեան վերաբնութեան Ա. զԵԼՆՈՒՄԸ նոյն այն է Վարչական կողմակերպութեան վիճարանութիւնը գոյուեղէ ետե, քուէի դրուելու համար երկու անխորտով ներկայացուած էր Ժողովին. քուէարկութեան օրն Բ. Ամխոտմըն ընդունուեցաւ. այս գործողութեան մէջ նախ բողոք եղաւ քուէարկութեան նոյն օրը կատարուելուն դէմ. երկրորդ՝ բողոքագիր մը մատուցուեցաւ եկեղեցական երեսփոխանաց կողմէն Բ. ամխոտմըն դէմ, զոր Սահմանադրութեան սկզբանց հակառակ կը գտնուին. և վերջապէս բողոքագիր մ'ալ մատուցուեցաւ 5 երեսփոխանաց կողմէն Տէր Երեմիա քահանային դէմ, իբր թէ երեսփոխան չըլլալով՝ փետրվար 20 ի երանխառով քուէարկութեանը մասնակցեր է: Հիմա Տէր Երեմիա քահանան ալ անոնց բողոքին դէմ բողոք կընէ յայտարարելով թէ ինք երբէք մասնակցած չէ Ժողովոյն մէջ կատարուած որ ե է քուէարկութեան:

քուէարկութեան մասնակցած չէ Ժողովոյն մէջ կատարուած որ ե է քուէարկութեան:

Ասոնց ամենն ինչպէս կը տեսնէք, Սահմանադրութեան վերաբնութեան ստիպուած գործողութեան մը կը վերաբերին. եթէ Ժողովը կը հասնի այս ամենը պահանք վերաբնութեան խնդրոյն նորէն ձեռք առնուելու միջոցին և այն ժամանակ պէտք եղածը որոշենք: Իսկ հիմա անցնինք անմիջապէս Օրակարգին:

ՔԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Մարտ 12 թուականու բողոքագիրն ստորագրող հինգ երեսփոխանք կըսեն թէ առանց Տէր Երեմիա քահանային նոյն օրուան քուէարկութեան մասնակցելը, մինչդեռ նոյն քահանայն՝ որ այսօր ալ հոս ներկայ է և կրնաք իրեն հարցնել, կը պնդէ թէ ինք ո՛ր և է քուէարկութեան մասնակցած չէ, ինչպէս որ մենք ալ տեսանք՝ անոր աւելի մօտ նստած ըլլալով՝ ի՞նչպէս կը յանդգնին այդպիսի սուտ մ'ըսել:

ԻԹԻՆԻՃԵԱՆ Վ. ԷՖ. (ձայնակցութեամբ Քախումաճեան Մ. էջ. ի) — Թէ որ Տէր Երեմիա քահանան 100 տարի ալ սնդուելու ըլլայ թէ ինք նոյն օրուան քուէարկութեանը մասնակցած չէ, դարձեալ լմեք պիտի ըսենք որ մասնակցեցաւ, վասն զի մեր աչքովը տեսանք, և մեր աւելի մեր աչքով տեսածին չհաւատալու իրաւունք ունինք:

Այս միջոցին Փախումաճեան էջ. մէկ կողմէն և Իթինիճեան ու Քախումաճեան էջները միս կողմէն իրարու դէմ բողոքելու առթիւ ձայներնին բարձրացնելով, ստեղծական հանդարտութիւնը շփոթեցին, այս շփոթն՝ որ օրս մը տեսց, Ատենապետ Փաշայի միջամտութեամբ վերնաղով, հանդարտութիւնն իսկոյն վերահաստատուեցաւ:

Ատենապետ Փաշան վերադառնալով ստաջարկեց որ թէ Տէր Երեմիա քահանայի բողոքն և թէ ուրիշ բողոքներն՝ որ վերաբնութեան գործողութեանց կը պատկանին, ետքի ձգուի: Այս առաջարկութիւնը քուէի դրուելով ԸՆԴՈՒՆ ՈՒՆՅԱԻ Ժողովէն:

ՕՐ Ա. Կ Ա. Ր Գ.

Ա.

Քննարարին Նախաքննիչ դիմանայ

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Օրակարգին կը պահանջէ որ անվճարէն Նախաքննիչ դիմանայ ընտրութեան ձեռնարկներ. այս ընտրութիւնն անհրաժեշտ է և ստիպարական, վասն զի առանց Նախաքննիչ դիմանալու ունենալու բոս կանոնի կարող չենք դորձ մը տեսնել: Ընտրութեան եղանակին դարձ, որդէն Կանոնադրութեան զծած է մեր առջև թէ ի՞նչ պէտք է ընել: Մայր դիմանն ըստ Կանոնադրութեան պէտք եղած սրբադրելի ցանկն իւր կողմէ պատրաստելով, երեսօխոսանաց ուղղեալ կոչնագրին հետ այս անգամ անիկ մէջմէկ օրինակ գրիկց. խորարանչիւր երեսօխոսան իրաւունք ունի նոյն ցանկին մէջէն չուզած անունն աւրել և իւր ուղածը գրել: Կարգչեմ, երեսօխոսան տեսաք աշաղրութիւն ընէր և ազատարար բուհներնից պատրաստէր, վասն զի ձեր ընտրելիք Նախաքննիչ դիմաններուն ձեռքը պիտի կողմնին Վարչութեան ժողովները, անոնց ձեռքը դարձեալ ուրիշ դորձերու նախապատրաստութիւնները պիտի կարգադրել տայր: Ուրեմն դար մէկ կողմէն բուհներնից պատրաստեցէր. միւս կողմէն բուհչամարին քննիչները պատրաստուին:

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՅ. — Կանոնադրութիւնն ինչ կը պահանջէ որ վիճակաւ ընտրուին բուհչամարի քննիչները:

ԵՈՒՍՈՒՑԵԱՆ Տ. ԷՅ. — Կողմնադրութիւնն որ Առեւտրական Փաշան բացատրէ, ի՞նչ կը նշանակէ այդ վիճակաւ բառն՝ որ Կանոնադրութեան մէջ գրուած է:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Կը նշանակէ թէ խորարանչիւր երեսօխոսանի անունն մէջմէկ թուրթի վրայ գրուած պիտի ըլլայ և անոնցմէ չորս անունն աւսփի մը մէջէն դուրս պիտի հանուին մէկուն ձեռքը. այս է կարծեմ վիճակաւ ընտրութիւնն ըստ ըստ: Բայց միթէ այսրան կարեւորութիւն ունի՞

յութիւն ունի՞ այդ ընտրութիւնը: Կանոնադրութեան խմբագիրը՝ Ուսմանեան Էֆէնտին հաս է. թէ որ կողմէր՝ անոր հարցները թէ ի՞նչպէս կը հասկնայ վիճակաւ ընտրութիւնը:

ԵՈՒՍՈՒՑԵԱՆ ԷՅ. — Սեպտեմբր թէ խմբագիրը մեռած է. բայց Կանոնադրութիւնը հաս է, կորուցէր:

ԵՈՒՍՈՒՑԵԱՆ Տ. ԷՅ. — Ես ալ Կանոնադրութիւնը ծայրէ ի ծայր կորուցցեր եմ, և թէ և անոր սարսուղութիւնը միտքս պահելու պարտաւոր եմ, սակայն այդ վիճակաւ ընտրութեան կէտը միտքս չէ մնացած, կարգչեմ որ կորուցցուի հիմա:

Փափաղեան Ս. Էֆ. — Կարգաց կանոնադրութեան նոյն մասն, որ է

« Ժողովին մէջ ընտրութիւնը գաղտնի բըււէով կը ըլլան, և բուհչամարը չորս քննիչներու ձեռքը կը կատարուի որոնք վիճակով կը « հանվին » (յօդ 47):

ԵՈՒՍՈՒՑԵԱՆ Տ. ԷՅ. — Վիճակաւ բառը չը տրամադրէր որ երեսօխոսանաց անունները զոտ զոտ ինքի վրայ գրուին, և անոնց մէջէն 4 անուն հանուի. թէ որ առանկ է, պէտք էր բացատրել Կանոնադրութեան մէջ: Կարծեմ թէ ամէն կանոն կը ներքէ որ ժողովներու մէջ գործնական եղանակաւ դորձ տեսնուին. ի՞նչոր հիմա այդ խմբագրով Կանոնադրութեան նոյն տրամադրութիւնն ըմբռնելու ըլլանք, պէտք է որ բացակայից անունները զատուին և ներկայից անունները գրուելով՝ անոնց մէջէն 4 անուն բաշտի:

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՅ. — Երեսօխոսան է. Էֆէնտին, պարտաւոր տեղ Կանոնադրութեան բըւււմահան մեկնութիւն մի տար. Կանոնադրութիւնը վիճակ սահմանած է և ամենքս կը հասկընանք թէ ի՞նչ է վիճակը: Կանոնադրութեան դէմ մի մեղանչէր, նախ Կանոնադրութիւնը սրբադրելիք և յետոյ ձեր սրբադրածին համեմատ գործադրելիք: Իմ պարտաւորութիւնս է հսկել Կանոնադրութեան և Սահմանադրութեան տրամադրութեանց:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Ներկեցէր, երեսօխոսանաց անուններուն բուհչամարը պատրաստ է, Սրբադրան Նախադասին կը յանձնեմ որ 4 անուն բուհչ անունց մէջէն:

Այս միջոցին երեսօխոսանաց բուհչամարը զոտ զոտ անուն միայ պատրաստեալ Սրբադրան Նախադասին ներկայացուելով, կարգաբաշած անուններէն մի բանին բացակայից ելնելէ և սարսուղի երթալէ ետե, ներկայ գըւնուցներէն հետեւալ չորսին ելու վիճակը, որ բուհչամարի քննիչ կարգուեցան:

Ուսմանեան	Էֆէնտին
Մարգարեան	Յարութիւն
Շահարաղեան	Կարապետ
Քալուկեան	Ս. Եւսիս

Անվճարէն բուհարկութիւնն սկսաւ, և ներկայ երեսօխոսանաց բուհարկի մէջ անուանուած կան կոչման կորգաւ բուհարկին մէջ զեւեղուեցան:

Փափաղեան Ստեփան Էֆէնտին բուհարկութեան ժամանակ բացակայ ըլլալով, անուանական կոչման չարտաստանեց:

Արտաշատեան Սարգիս Էֆէնտին կոչման ստանն՝ Առեւտրական Փաշան յայտնելով թէ նա մեկնելու ատի իւր բուհարկի իրեն յանձնած է, Ժողովին հասանութիւնն ստանելէ ետե իր բուհարկը ձգել տուաւ:

Նոյնպէս Առեւտրական Փաշան յայտնելով թէ Շահարաղեան Նախարար Էֆէնտին Պրուսաստանապարհարկելու ատի իւր գրած նամակին հետ իւր բուհարկը ալ զրկած է, Ժողովին կամայ յանձնեց նոյն բուհարկին ընդունիլ կամ ոչ:

ԵՈՒՍՈՒՑԵԱՆ Տ. ԷՅ. — Կարծեմ թէ չանի որ ընտրելուց ցանկ գրուած է Ղևանդին կողմ, երած բուհչ կրնայ ընդունուիլ:

ՄԷՐԵԼԻՄ - ԳՈՒԼԻ Տ. ԷՅ. — Ես կարծեմ թէ ժողովը նախորդ որոշում մ'ունի այս մասին թէ բացակայ երեսօխոսանին զրկած բուհչ չընդունուի:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Եթէ կայ այդպիսի

որոշում մը, իմ ատենապետութեանս օրով չէ. անիկ առաջ եղածը չեմ գիտեր. բայց սա պէտք է ըսեմ որ եթէ կանխաւ տեսնել որոշում մ'ալ եղած ըլլայ, այսօր Ժողովը եթէ ուզէ կրնայ իւր բուհարկ վախճել:

Չայս ըսելով Առեւտրական Փաշան բուհի դրու Շահարաղեան Նախարար Էֆէնտին զրկած բուհարկին ընդունելու կամ չընդունելու կէտըն, և Ժողովը ընդհանուր ձայնիս ՄԵՐԵԼԻՄ զայն:

Քալարկութեան տարտեղէն և բուհարկուաց թուոյն ճիշդ 61 ըլլալն ստուգուելէ ետե, անվճարէն բուհչամարի գործողութիւնն սկսաւ, և սոս մը շարունակուելէ ետե, Առեւտրական Փաշան տեսնելով որ շատ կերկարի, բուհչամարի գործողութեան արդիւնքին սպասելու ատի իւ ժամակաճատ չըլտու համար առաջարկեց և Ժողովը ընդունեց՝ որ մէկ կողմէ բուհչամարի գործողութիւնը շարունակուի ընդ հըս կողմէ ամբողջութեամբ քննչաց և միւս կողմէ Ժողովը իւր Օրակարգի խմբիչներունը գրողի:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Պարտաւոր կը համարիմ այժմէն յիշեցնել թէ բուհչամարի արդեանց համեմատ ընտրուելիք Նախաքննիչ դիմանայ անգամներն իրենց խորարանչիւր դիմանի տեսնուած պէս ընտրելէ ետե, նոյն ատենապետաց՝ որ թուով 8 կը ըլլան, առաջին գործը պիտի ըլլայ ըստ Կանոնադրութեան Համագումար դիմանական ժողով կազմել ընդ նախադասութեանք Մայր դիմանի ատենապետին և Սրբադրան Պատրիարքին հետ խորհրդակցութեամբ Վարչութեան Քաղ. Ժողովը համար կրկնապատիկ թուով այն է 28 անձանց զեղչելի ցանկ մը պատրաստել: Իսկ Կրան. Ժողովը համար Սահմանադրութեան տրամադրած Երեզնցական Համագումար ժողովը պատրաստելիք ետապատիկ թուով այն է 42 անձանց ցանկը պիտի ներկայցուի Ժողովին: Այս կէտերը յիշեցնելէ ետե սա ալ կը յուսեցնեմ թէ կրնան գտնուիլ երեսօխոսանաց մէջ այնպիսի մարդիկ՝ որ ըսեն

Քէ Քաղ . Ժողովոյ համար ներկայեալ զեղչելի ցանկին մէջ պարունակած անձանցմէ շատերը մեզ ծանօթ չեն , կամ մեր վստահութիւնը չեն կրեր : Եւ ըստ որում Քաղ . Ժողովն ընտրուելէ ետեւ Բ . Դուռը նոյն կատարուած ընտրութիւնը պիտի վստահացնէ , յետ ընտրութեան խնդիր մը չձագեղու և այս առթիւ Բ . Դրան դատաստանին զիմերու տեղի չտալու համար , Ժողովը նախ սա կէտը պէտք է որոշէ թէ արդեօք Քաղ . Ժողովոյ ընտրութիւնը կտանձադրութեան համաձայն զեղչելի ցանկի մը վրայ թէ ոչ՝ մինչև հիմա եղածներուն նման Սահմանադրութեան ազատ ձգած կերպով պիտի կատարուի :

ՃԱՅՃԱՅՅԱՆ Ս . ԷՖ . — Զեղչելի ցանկի ո՞վ պիտի պատրաստէ :

ԱՏԵՆԱԳԵՏ ՓԱՇԱ . — Ըստ կանոնադրութեան Մայր դիւանի ատենապետն և Նախարանի զիւանաց ատենապետներն՝ ընդ ամենն 8 — 9 հոգի մէկտեղ գալով պիտի պատրաստեն :

Սահմանադրութիւնը բոլորովին ազատ կը ձգէ զընտրողներն՝ ուղած անձերնուն բուէ տալու . իսկ կանոնադրութիւնը զեղչելի ցանկի մը վերածած է այս ընտրութիւնը :

ՄԻՐԵՒՄ - ԴՈՒԼԻ 8 . ԷՖ . — Դրան միջամտութեան խօսք մը ըրիք՝ Ատենապետ փաշա . կը չաճիք դոյզ բացատրել :

ԱՏԵՆԱԳԵՏ ՓԱՇԱ . — Ետ աղէկ , բացատրեմ , Ըսի թէ կանոնադրութեան համաձայն Նախարանի զիւանաց ատենապետները մէկտեղ գալով՝ Քաղ . Ժողովոյ համար 28 ընտրելի պիտի որոշեն , և Ժողովս այս ընտրելեաց մէջէն չուղածը զեղչելու և ուղածն ստնելու պայմանաւ պիտի ընտրէ Քաղ . Ժողովոյ համար 13 հոգի : Միթէ չկրնա՞ր ըլլալ որ երեսփոխանաց մէջէն մէկ կամ երկու հոգի՝ ընտրուածնեբուն վրայ վստահութիւն չունենալինն պատրուակ առնելով երեսն բողոքեն և մինչև իսկ Բ . Դրան դիմեն , որմէ քնականարար Դրան միջամտելը հարկ կըլլայ : Պէտք է զիտնալ որ կանոնադրութեան զեղչելի ցանկ ըսածը կը բռնադատէ երեսփոխաններն՝ որ կամայ ակամայ վստահութիւնին քննակն ներկայացեալ ընտրելեաց վրայ , և անոնց մէջէն պէտք եղած թուով ուղածնին ստնելու և չուղածնին ձգելու : Այսինքն Սահմանադրութեան և կանոնադրութեան ընտրութեան մէջ եղած տարբերութիւնը հոս կը կոչուանք : Սահմանադրութեան և կանոնադրութեան մէջ եղած տարբերութիւնը հոս կը կոչուանք : Սահմանադրութեան և կանոնադրութեան մէջ եղած տարբերութիւնը հոս կը կոչուանք : Սահմանադրութեան և կանոնադրութեան մէջ եղած տարբերութիւնը հոս կը կոչուանք :

րելեաց վրայ , և անոնց մէջէն պէտք եղած թուով ուղածնին ստնելու և չուղածնին ձգելու : Այսինքն Սահմանադրութեան և կանոնադրութեան մէջ եղած տարբերութիւնը հոս կը կոչուանք : Սահմանադրութեան և կանոնադրութեան մէջ եղած տարբերութիւնը հոս կը կոչուանք : Սահմանադրութեան և կանոնադրութեան մէջ եղած տարբերութիւնը հոս կը կոչուանք :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս . ԷՖ . — Կանոնադրութիւնը բռնադրած է Աղղ . Ժողովոյ զԱրշաթիւնն ընտրելու իրաւունքը , այլ ցարդ վարչական ընտրութեան մասին եղած զիտողութեանց համաձայն չափաւորութիւն մը մտցուցած է , որով թէ Ժողովս ընտրական իրաւունքը սահպանած է և թէ ընտրութեան մասին զիտողութիւն ընտրելը գոհ ըրած : Սահմանադրութիւնը չտրամադրէր որ Քաղ . Ժողովոյ ընտրութիւնը ցանկի մը վրայ ըլլայ , բայց ցանկի մը վրայ չընել ալ չտրամադրէր . ուստի երբ Ռուսիան ԷՖ . ի պատրաստած կանոնադրութեան ծրագիրը բննելու համար Մ. Ս . Պատրիարք Զոր հրամանաւ Ա. Սեմ . Յարութիւն պէշի չեա ես ալ մասնակից եղայ իրրե նոյն ժամանակի Ժողովոյ զիւանի անկամ , ընդունեցինք ցանկի մը վրայ Քաղ . Ժողովն ընտրելու դրութիւնը , նկատելով որ Սահմանադրութիւնն ընդունած է որիչ ընտրութեանց համար ընտրելեաց ցանկի դրութիւնը : Իսկ այս ցանկը զեղչելի այսինքն զոյ սահմանելուն սկզբունքը տեսանք որ արդէն կրնա . Ժողովոյ համար Ե . կեղեցական Համագումար Ժողովոյ պատրաստած ցանկին դրութեանը մէջ կոյ . բայց որպէս զի Քաղ . Ժողովոյ զոյ ցանկի դրութիւնը կարենանք հաշտեցնել այն ընտրական իրաւանց չեա , զոր Սահմանադրութիւնը տուած է Աղղ . Ժողովս , հարկ համարեցինք կանոնադրութեան մէջ տրամադրել որ յառաջ քան զզեղչում նոյն ցանկը Ժողովն քուէին երկարելու , և երբ

Ժողովն ընդունի նոյն ցանկը , այն ստեն ցանկն իւրացուցած ըլլայ , այն է իւր հաւանան պատրաստածը , և անկէ դուրս չեղնին ինքնին որոշած ըլլայ , և սպա այն ցանկը զեղչելով ընտրէ Քաղ . Ժողովոյ անդամներն , որով իւրարանչիւր երեսփոխանի՝ իւր հաւանան ընտրելու ազատութիւնն ալ պահպանուած կըլլայ : Եւ որպէս զի Ժողովը կանխաւ կարենայ պատրաստուիլ այդ ցանկին ընդունելութեանը կամ մերժմանը , հարկ համարեցինք որ պատրաստելու ցանկը կանխաւ հողորդուի երեսփոխանաց՝ իրենց հրատարակին չեա , որը կանխաբնեւ ընտրելեաց յատկութիւնները , զիւրութիւն անհեան այդ ցանկին վրայ իրենց համաձայն զոյցայնել կամ զիտողութիւն երկ անին Ժողովն ներկայացնել :

Ահա կը տեսնէք որ կանոնադրութեան այն տրամադրութիւնները Սահմանադրութեան չեն հակառակիր , և երեսփոխանաց ընտրական իրաւունքն ալ ըստ ամենայնի կը սահպանեն : Ուստի կատարելեմ որ Արշաթիւն ընտրութիւնը կանոնադրութեան ցուցուցած եղանակին համեմատ կատարուի : Այնպէս չէ՞ , Ռուսիան ԷՖ . ի Բ . Ս . յո՞ր , այո՞ : [Հատեցողական ձայներ] :

ԱՏԵՆԱԳԵՏ ՓԱՇԱ . — Կը տեսնեմ որ լիապէս հաւանութիւն կը ցուցուի կանոնադրութեան տրամադրած եղանակու զեղչելի ցանկի վրայ Քաղ . Ժողովոյ ընտրութիւնը կատարել : Արեւմ ընտրութեան եղանակի կէան ընդհանուր հաւանութեամբ ընկալեալ և լուծեալ նը կատարով , Նախարանիչ զիւանաց ընտրութեան քուէհամարի արդիւնքն բննչաց ստորագրութեամբ վստահացեալ ստանալ յետոյ կը յանձնենք Ս . Պատրիարք Զոր որ շնորհ կընէ ընտրեալ անդամներն տալիկոյ ուրբաթ օր ի նիստ հրաւիրել իւրարանչիւր զիւան իւր ատենապետն ընտրելու համար , որպէս զի ընտրեալ տեսնալեաներն ալ ի խորհուրդ գումարուելով Ս . Պատրիարք Զոր խորհրդակցութեամբ Արշաթիւնն Քաղ . Ժողովն ընտրելեաց ցանկը պատրաստեն . և այս ցանկն անմիջապէս տարուելով երեսփոխանական կոչնադրերուն չեա մէջ մէկ

օրինակ կը հողորդուի բոլոր երեսփոխանաց , իրենց քուէները 15 օրէն գումարելի յաջորդ նիստին ներկայացնելու պայմանաւ պատրաստելու համար , որ Արշաթիւն Ժողովոյ ընտրութեան գործը կը զիւրանայ նոյն օրն ի մէջ ժողովն :

ԵՖ . — Կարծեմ թէ զեղչելի ցանկն ամենը մէկէն քուէարկել պէտք է , և ընդունելի դատուելէ ետքը զեղչել տալ երեսփոխանաց :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս . ԷՖ . — Նախապատրաստութեան համար այդ ցանկը կը դրկուի օր առաջ երեսփոխանաց . երբ ամենը կարգան և ընդունելի դատեն , լուր է թէ ընդհանուր հաւանութեամբ ընդունուած կըլլայ :

ԱՏԵՆԱԳԵՏ ՓԱՇԱ . — Միտնդամայն կը խնդրենք Ս . Նախագահէն որ մինչև յաջորդ նիստ՝ կրնա . Ժողովոյ համար Եկեղեցական Համագումար Ժողովոյ կողմէն պատրաստուելիք եռապատիկ ընտրելեաց ցանկն ալ չինել տալով բերէ Ժողովոյ , որով ամեն բան պատրաստ գտնուած ըլլայ Արշաթիւնն երկու Ժողովներն ընտրելու համար :

Ք .

Ինտրորին Համարտորին Յանձնախմբի

ԱՏԵՆԱԳԵՏ ՓԱՇԱ . — Ինչպէս որ տնայեալ նստին խօսուեցաւ , Արշաթիւն համարատուութիւններ կան սկսեալ 1870 թուականէն , որոնք պէտք է նայուին . ես առաջարկեցի և Ժողովն ընդունեց որ Գանձախուր մը դրուի 70 էն ի վեր հրատարակուած վարչական համարատուութիւններէն նախարանական կերպով բազել անոնց ստեղծ համարը և բերել հա տեղեկագրով : Սովորութիւն է որ ամեն տարի մէկ մէկ տեսարակ կեղնէ Արշաթիւն համարատուութիւն անուամով , սրը տարուած , որ մէկն ալ ձեռագիր , որք մինչև ցարդ ոչ զոհունակութեան և ոչ տեղափոխութեան քուէ ընդունած են Աղղային

Ժողովին . ստացէ է որ Աստուածաբանական հաստատութեանն ի վեր Արքայական համարապետութիւնը նոյն կարեւորութիւնը չունի ինչ որ ունէր յառաջն , զի սոսկ տակն ըստ Սահմանադրութեան Ազգ . Ժողովը երկու տարին անգամ մը մէկ երկու ամիս նիստ կ'ընէր , և հարկ էր որ վարչական անցեալ երկու տարեկան համարապետութիւնն ընէր . հիմա Ժողովիս նիստը տարին միայն մէկ ամիս զազար կառնու և ամեն ժողովի երեւոյթանք հարցում և հարցադրեալով ընկեր արտօնութիւն ունին Արչական գործոց վրայ : Ուստի այս անգամ մեր անցեալին հաշիւը զոյգելու համար , բաւական է որ Յանձնախումբը զամենը մէկէն քննէ և մեզ Համարապետութեան Տեղեկագիր մը բերէ որպէս զի գիտնանք թէ որո՞նք են այն անձինք որ մեր վարչական գործոց տղղութիւն տալով արժանի կը հանդիսանան մեր շնորհակալեաց :

Համարապետութեան յանձնախումբի առաջարկութիւնն արդէն ընդունուած է նախորդ նըստին , ինչպէս Օրակարգն ալ անցած է . կը մընայ հիմայ ընտրութիւնը կատարել , միայն թէ ընտրուելիք յանձնախումբին մէջ հարկ պիտի ըլլայ որ Արչութեան անգամ եզրղիները չզանտին :

Պատմին առաջարկութեանը Համարապետութեան յանձնախումբն ընտրուեցաւ հետեւեալ 7 անդամներէն .

- Եզնիկ Արքայապետ
- Սարգիս Էֆ . Ազարէկեան
- Յակոբ " Քաղապետ
- Կարապետ " Եւստորգեան
- Աւետիս " Քաղապետ
- Ուստի " Կիւմիւշկերտան
- Յովսէփ " Մաղլոսեան

Ժողովն իւր հաւանութեամբ հաստատեց սոյն ընտրութիւնը :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ . — Համարապետութեան յանձնախումբին հրատարակուած վրայ 1870 էն ի վեր պաշտօն վարող Արչութեանց անդամները պարտաւոր են զալ ի հարկին իրենց գործառ-

նութեանց հաշիւը ստալ , զի սոսկ այս յանձնախումբին յանձնուած է ընել ինչ որ Ազգային ժողովս պիտի ընէր . այն Արչութեան անգամն էր որ սոսկ չեն ուզեր յանձնախումբի հրատարակուածն , նշան է թէ խոյս կուտան համարապետութեանն . զի սոսկ յանձնախումբը տէրէ պիտի անցնէ , բոլոր համարապետութիւններն , որպէս զի տեղեկացնէ Ժողովիս թէ այսօր ժամանակ ի վեր եկող գոյոց վարչութիւնը ինչ ինչ գործեր տեսած և ազգային խնդիրներն ինչպէս անօրինակ ու կարգազրոյց են . ուստի 1870 էն ի վեր հրատարակուած բոլոր համարապետութիւնը յանձնախումբին զրկել պէտք է . շէ հրատարակուած ալ կան նէ՛ անանք ալ ազգային պէտք է , որպէս զի ամենքը մէկէն իրատատիրել և կնքել կարող ըլլայ Համարապետութեան յանձնախումբը :

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք . ԷՖ . — Կարծեմ թէ շատ տարագրութեան կարօտ բաներ կան , բոցք բիչ մ'ալ ազգային սնտուկին վիճակը քննել պէտք է թէ կարո՞ղ է այդ ծախքերը սանել :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ . — Ընդ ձեր գիտողութեան թելը ձեռք պիտի առնու մը հիմա Արչութեան խնդրոյն անցնելով ըստ օրակարգին :

Պ .

Ինտրուրիս Երևանից Յանձնախումբի

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ . — Պատրիարքարանի ծախքերը յայտնի են . Յանձնախումբն մ'ալ պէտք է ըսինք անցեալ նախին , որ Պատմէ մը պարտապետ , բացարձակամար և պարտապետութեամբ , Արչութեան կըլումու տքն ըստ կամտնի անտեսելու համար :

ՄԱՄԻԿՈՆԵԱՆ Մ . ԷՖ . — Պատմէի պարտապետութիւնն օրէնքով սր՞ու կը վերաբերի . Արչութեան գործն է այդ . եթէ Պատմէ պէտք է ըստ օրինի Արչութեան յանձնելու , է որ պարտապետ և բերէ ի վաւերացումն :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ . — Սահմանադրութիւնը ու Աստուածաբանութիւնը կը սահմանէն թէ և որ Արչութիւնը պարտապետ Պատմէն , սա-

կոյն մինչև որ նոր Արչութիւնը գոյ և պարտապետ , շատ ժամանակ կանցնի . անոր համար տեղի աղէկ չըլլա՞ր որ յանձնախումբ մը ընտրենք և անոր յանձնենք՝ որ արցոյ , ծախսոց և հաստութից վիճակը ըստ մը ստուգէ և ըստ այնմ Պատմէ մը պարտապետ . մինչև այն աստի նոր Արչութիւնն ալ կը կողմնի . և անոր ալ գիտողութիւններն առնուելէ ետե կը վաւերացուի . Կարծեմ 1870 էն ի վեր 6 տարի կրկնայ որ շարունակ եկող գոյոց վարչութիւնը չը կրցան օրինաւոր Պատմէի մը վրայ ընթանալ . մեր հիմա նախապարտապետութիւնը կընենք , վիճարանութեան առնելու կէտին նոր Արչութիւնն ալ կը համար , և անոր ալ կարծիքն տանելով վճար կուտանք :

ՄԱՄԻԿՈՆԵԱՆ Մ . ԷՖ . — Կատարարկեմ որ հրատարակուած Արչութեան համարապետութիւնը տեսնել , եթէ Պատմէն բերած է սրբագրէք , և եթէ չէ բերած՝ հարկու չրեք . ընդ պատճառը բացարձակ և իւր յաջորդին թողած է , տոնք խնամալով պէտք եղած անօրէնութիւնն ընէր :

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք . ԷՖ . — Ստալ է այն որ կրտսի թէ Արչութիւնները Պատմէ չեն տուած . ևս կը վրայեմ վարձով որ ամեն աստի Պատմէ պարտապետ է Արչութեան ձեռք և ըստ այնմ գործ տեսնուած է : Սարգիս Էֆէնտիս վարչութեան օրով Պատմէ շինած և համարապետութեան հետ տողեալ հաղորդած ենք բոլոր երեւոյթանայ . բոցք երեւոյթանութիւնը չէ նայած մինչև ցայսօր :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ . — Ես՝ վարչութիւնները Պատմէ չըտտին չըտի . այլ չկրցան Պատմէի համեմատ գործ տեսնել . անցեալ Արչութիւններէն Պատմէ չտուող ալ կայ , սաւոյրինն ալ մեր չվաւերացուցինք , որով ըսել ուզեցի թէ մինչև ցայսօր սահմանադրապէս չկրցինք ընթանալ Պատմէի մասին : Սյս խօսքով միտքս անցեալ վարչութեանց մեղադրանք ընել չէ :

ՓԱՓԱԶԵԱՆ Ս . ԷՖ . — Երեւոյթանութիւնն ալ սրահասար չէ . մեր էինք որ երբ հրատարակուած Արչութիւնն անցեալ տարուան Պատմէն բերու , պէտք չէ ըսինք , և յաջորդին ուզեցինք յանձնար մէկին , որ ցարդ չեկա .

ահա այդ Պատմէն է որ եթէ գար՝ պիտի յանձնուէր Համարապետութեան գիտնին կամ Մատնածողովի մը :

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք . ԷՖ . — Սալի բերան Ստեփանակա Փոչոյցի խօսքէն այսպէս հասկացալ թէ Արչութիւնները մինչև հիմա Պատմէ տուած չեն , և պարտապետութիւնն տուողներ կան , ինչպէս որ եկած համարապետութեանց մէջ պիտի տեսնուին : Սարգիս երբ Ստեփանակա Փոչոյցի կը խօսէ թէ Պատմէի համեմատ ընտ վարչութիւնն , այս մասին կը պարտապետենք՝ որ եթէ պարտապետութիւն մը կայ , այդ պարտապետութիւնը նախ այս Ժողովինն է որ Պատմէ մը վաւերացուցած և յանձնած չէ Արչութեան , որովս զի Արչութիւնն ալ անոր համեմատ վարարի :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ . — Գար՝ Քրիստոստար Էֆ . վարչութիւնները կարգարարչէք պիտուէի մասին , Պատրիարքան էֆ . ալ Ժողովս կարգարարչն է , ևս կը տեսնեմ որ այսօր արդար ներս մէջ գործեալ Ազգին ելումուտը պիտուէի սահմանի մէջ չեն տնօրինուիր . տար գարմանը նայինք :

ԵՆՈՒՍԱՆԻՅԵԱՆ Տ . ԷՖ . — Տանեկնից օրեալ նոր Արչութիւնն պիտի գոյ , բնականապէս նա իւր նախորդին պիտուէն կամ կրնալ նի կամ նոր վարչութիւններով հոս կը բերէ վաւերացումն համար , ուստի՝ եթէ նոր Արչութիւնը չեկած մեր յանձնախումբն այս կէտին մէջ կարտած կրկնոր : Հետեւորս , աւելի ըստ իս նոր Արչութիւնը գնենք , նա բերէ իւր պիտուէն , և այն աստի յանձնախումբի մը յանձնենք անոր բնութիւնն :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ . — Կարծիքներն ամփոփելով կը տեսնենք որ երկու կարծիք կայ ընդհանրապէս . մէկն է այժմէն յանձնախումբ մը բարեւոյ պիտուէ մը պարտապետ և նոր Արչութեան կարծիքն առնելով վաւերացուելու յանձնել ի գործադրութիւն : Եւ երկրորդն է՝ սահմանադրապէս վարչութիւնն սպասել որ նոր գոյի Արչութիւնն իւր Պատմէն բերէ :

ՓԱՓԱԶԵԱՆ Ս . ԷՖ . — Սահմանադրապէս ընթանալ ըսելով գիտանք սխալ մը կը գործէ և մեր կը շփոթինք . արդէն անկետս վարարն է

Սահմանադրութեան համեմատ բնթանալ. բայց որովհետև նոր Արչութիւնը նստած օրէն բազմագիւծի գրադմուսներով չպիտի կրնայ իւր Պիւտճէն փութայնել, մեր կրնողուններ որ իւրե նախագատարատութիւն յանձնարարի մը ձեռք հոս գայ Պիւտճէն, և վաւերացուի, միանգամայն Արչութիւնն ալ ընտրուելով վաւերացեալ Պիւտճէն անոր յանձնուի ի գործադրութիւն:

ԻԻԹԻԻՃԵԱՆ Կ. ԷՅ. — Սահմանադրութեան պահանջած և և տրամադրած պիւտճէն ամենուս հասկցածին համեմատ այն է որ Արչութիւնն գալիք տարւոյ մէջ ըլլալիք ծախսոց և հաստթից հաշուեկէիտը կը շինէ և ժողովիս վաւերացնել տալէ ետև, անոր համեմատ կը տրնտեակ իւր ելումուտը: Հիմա մեր նոր Արչութիւն ունինք ընտրելիք, որ գալիք տարւոյ ելումուտը պիտի տնտեակ. բնականաբար անոր կիցնայ գալիք տարւոյ հաշուեկէիտը բերել Ժողովիս և վաւերացնել տալ:

Ես պիւտճէ ըսելով այսպէս կը հասկնամ և չէ թէ անցեալ տարւոյ մէջ եղած ծախսոց և հաստթից հաշուեցոյցը: Ուստի կտառաւարկեմ որ ըստ Սահմանադրութեան քանի որ Արչութեան գործն է Պիւտճէն տրամադատել, դարձեալ նոր ընտրելի Արչութեան յանձնուի իւր Պիւտճէն շինել բերել և վաւերացնել տալ Ժողովիս:

ՄԵՐԵԿԵՄ-ԳՈՒԼԻ Ե. ԷՅ. — Ես իւթիւնեան էֆ. ի ըսածին պէս չեմ համարար Պիւտճէի ինչորը, այսու ամենայնիս տարբերութիւն մ'ալ չեմ գտներ Երուսթեան, Փափազեան և ուրիշ էֆէնտիներուն ըսածներուն մէջ:

Կը մնայ մեր կազմելիք յանձնարարին պաշտօնը գիտնալ. եթէ Պիւտճէ պիտի շինէ չեմ կրնար ընդունիլ. իսկ թէ որ պիւտճէն բնեւոր համար է, աւելի ողկէ է Նախարանութեան գիւանին զրկել:

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՅ. — Կը ձայնակցիմ Մերեմ - Գուլի էֆէնտիին:

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՅ. — Նոյնպէս կը ձայնակցիմ և ես:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Կը տեսնեմ որ ինչորը բուսական լուսա որուեցում, իրաւ է որ

տահմանադրադէս Արչութեան կը սրտակամի գալիք տարւոյ հաշուեկէիտը շինել բերել. բայց եթէ էս անցեալ և ներկայ նստերուն այս խընդրոյն համար յանձնարարի մը առաջարկեցի. ուրիշ բանի համար չէ, այլ անոր համար միայն որ գալիք վարչութեան վրայէն բեւ մը սրտակեցոյցած ըլլանք: Իսկ հիմա քանի որ կարծիքները բաժնուած կը գտնեմ, որոշման մը համեմատ համար հարկ է որ այս գանազան կարծիքները բուկի գնեմ: Արեւմտ սվ որ կրնողունի Ելեմուսից յանձնարարի մը կարգել, ելեմուսից վիճակը սերտելու և յառաջիկայ տարւոյ Պիւտճէն կամխաւ պատրաստուելու համար թող ձեռքը վեր վերցնէ:

Ժողորը միաձայնութեամբ ՄԵՐԵԿԵՄ այն առաջարկութիւնը:

Ատենապետ Փաշան յարեց. — Ով որ ընտրելի Արչութեան բերելիք Պիւտճէին բընտրութեան համար յանձնարարի կարգել կընդունի...

ՄԵԼԻՔԵԱՆ Մ. ԷՅ. — [Թողմիչեղով] Գեւոր Արչութիւնը չէ կեկոմ:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Արեւմտ սվ որ կընդունի որ այժմէն Պիւտճէի պատրաստութիւն շտեմուի և սարատի նոր ընտրելի Արչութեան բերելիք Պիւտճէին...

[Թողմիչումներ]
ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՅ. — Այդ չէ Մերեմ - Գուլի էֆ. ին առաջարկութիւնը:

ՄԵՐԵԿԵՄ-ԳՈՒԼԻ Ե. ԷՅ. — Ես ըսի թէ ընտրուելիք յանձնարարին պաշտօնն եթէ պիւտճէի բնութիւնը պիտի ըլլայ, հարկ չկայ յանձնարարի. այլ Համարակարգութեան գիւանին յըրիչ պատշաճ է. իսկ պիւտճէին գալով թէ նախորդ և թէ գալիք Արչութեան, սրն ալ ըլլայ կընդունիմ:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Խնդիրը չփութեցինք. Պիւտճէն Արչութիւնը կուտայ այս յայտնի բան է. բայց ես գալիք Արչութեան գործը գիւրացնելու համար առաջարկեցի որ Պիւտճէն նախապատրաստենք, իսկ դուք կըսէք որ թող վարչութիւնը գայ և ինք շինէ:

ՄԵՐԵԿԵԱՆ Մ. ԷՅ. — Իմ կարծիքս

է յանձնարարի մը ընտրել, որ նախորդ Արչութեան ներկայացուցած պիւտճէն ի բնին առնու, և նոր վարչութեան կարծիքն ալ առնելէ ետև հոս բերէ:

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՅ. — Յանձնարարի գործ չկայ, Համարակարգութեան գիւանը կրնայ ընել այդ բնութիւնը:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Քուկի դրուելիքն որոշակի հասկցուելու համար կը հրատարակ տառաջարկութեան տէր եղողները գրով ներկայել առաջարկութիւնին:

Փափազեան էֆ. գրով ներկայացուց չեւտեալ առաջարկութիւնը:

Այստրուռնէ պաշտօն ունենայ Համարակարգութեան գիւանը նախորդ Արչութեան պատրաստած պիւտճէն բնեւ և նոր Արչութեան կարծիքն ալ առնով բերել Ժողովիս ի վաւերացումն:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Մեղիքեան էֆէնտի, դուք ալ գրով բերէք ձեր առաջարկութիւնը:

ՄԵԼԻՔԵԱՆ Մ. ԷՅ. Նոյն է ինչ որ Փափազեան էֆէնտին տուա:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — (Կարդալով Փափազեան էֆ. ի տուած վերոյիշեալ գրաւոր առաջարկութիւնը) Արեւմտ այս առաջարկութիւնը բուէի կը գնեմ:

Անիջապէս բուկի դրուելով նոյն առաջարկութիւնը, միաձայնութեամբ ԸՆԴՈՒՆՈՒՆԻՑ ԾԱԻ Ժողովն:

Առաջարկութիւն Ս. Պատրիարք Հոր

Ս. ՂԱՏՐԻԱՐՔ. — Ասիկց 15 օր տառաջարկութիւնը նոր բացման առթիւ ըրած առեւնախօսութեանս մէջ կը նկարագրէի համապատասխան ներկայ ժամանակիս տաղնադարից վիճակը, հըրտէր կարգացի ձեղ, ինչպէս կը յիշէք, որ ամեն ժամանակ աւելի արթուն և աշարարջ գըտնուիք: Արդարեւ երկանց տաղնադար էր ոյն, յորմէ կը յուսացուէր վերածնութիւն մը պիտի ծնանէր, այս վերածնութիւնը կը կարծուի որ կատարուեցաւ: Սուրբան Ապաիւլ-Աղիզ գահընկէց եղաւ և անոր տեղ իր օրինաւոր յաջորդ Օգոստոսիա Սուրբան Մուրատ Ե. հաջակուեցաւ կայսր Թուրքիոյ: Մայիս 18 ին երեքշաբթի առաւօտ կանուխ հրամանագիր մ'ստացայ Մեծ Կայսր:

դու Մէհմետ Բիշարի փառայնէն, որով կը հրատարակէր զիս նոյն առաւօտուն եղիսրպատոց և ազգին երևելեացը հետ ներկայանալ նորապատկ կայսեր առ ի շնորհաւորութիւն: Անիջապէս նախ բան զամենայն ազգապետս, փութայնիք արքունի պալատը և Օգոստոսիա կայսեր գահակարգութիւնը շնորհաւորեցինք յանուն մեր և ամենայն բրիտանեայ ազգոց. թէև կը փափաքէի սուկոյն ժամանակ չկար որ ամենդ ժողովէի հետս տանէի, ինչպէս որ Մեծ Կայսրդուր զըրած էր, ազգին երևելիներն ալ ըսելով, որ դուք երեսփոխանքդ կրնայուիք:

Ինչպէս որ ըսի, երկանց տաղնադար էր այն որ այս վերածնութեան վստահ յոյսը յառաջ բերաւ, փոթորկալից օղէն և ամպէն այս արևը ծնաւ. մաղթենք որ այս արևը համայն Թուրքիոյ և մանաւանդ մեր Հայաստան երկրին կենսատու ըլլայ:

(Երեսփոխանք միաձայնաւ. — Ամեն)

Քանի որ Հայաստան կարևոր մասն է Օսմանեան աշխարհին, քանի որ մեր անբաժանելի կերպով կապուած ենք Օսմանեան աշխարհին հետ, մեր սրտին ամենէն նախնական բաղձանքը պէտք է ըլլայ միշտ Հոյաստանի բարօրութիւնն ու բարգաւաճումը: Այս մասին ամեն յոյս կուտայ մեզ արդէն Նորընտիր կայսեր կողմէ հրատարակուած առաջին հրովարտակըն, որով տէրութեան ամէն կարգի հրատարակուած համար կատարեալ ազատութիւն և հաւասարութիւն կը խոստացուի, և երկրին բարեկարգութիւնն աւելի ամուր հիման վրայ հաստատուելու համար կը հրամայուի բարեկարգական նոր ծրագիր մը ներկայացնել: Այս յուսով ուրիշ ազգերէն ետ չը մնալու համար պարտաւորութիւն կզգամ հրատարակ Սուրբ Երեսփոխանութիւնն որ չյապաղէ իւր կողմէն ինքուկցութեան շնորհակալեաց Ողբերձ մը պատրաստել Օգոստոսիա կայսեր մատուցանելու համար ի գիմաց ընդհանուր Ազգին. ուստի կառաջարկեմ որ այժմէն խորհիք թէ ինչ ընել պէտք է այս մասին:

ՅՈՒՍՈՒՅԵԱՆ Տ. ԷՅ. — Տեսիք Երեսփոխանք, տարակցո չկայ որ Օգոստոսիա Սուրբան Մուրատի գահակարգութիւնն Օսմանեան

ազգին համար, որոս անդամն ենք մեք ալ, նոր դարազրուի մ'է, հետեւապէս և մեր ամենաս որարորն է մասնակցիլ հասարակաց ուրախութեան, և արգէն մեր Ս. Պատրիարքը յամուսն ազգին ներկայանալով Նորին Վեհափառութեան պէտք եղած շնորհաբարութիւնն ըրեր է: Այլ տեսնեմք որ օտարներն ալ թէև պաշտօնական ձև ունին, մասնաւոր շնորհաբարութիւն մատուցանելու համար միտնեց կը գումարեն. մեր ես՝ որ այս ցնծոյց լուրը պաշտօնական ձևով հոս խորոյն մէջ ստինք, պէտք է ազգովին Ուղերձ մը մատուցանենք և ցոյց տանք թէ ի՞նչպէս կողջունենք այն արևն՝ որ կը ծագի Օսմանեանց համար. միանգամայն սարգային վրայ ունեցած յոյսերնիս ալ ներկայանենք: Ուստի կառաջարկեմ որ երեսփոխանական ուղերձին խմբագրութեան համար, մեր մէջէն յանձնախումբ մը կազմենք, որոյ անդամ լինին Ա. Գրո, Ն. Երևան և Քաղաղեան էֆէնդիներն Ս. Երևանացի Փաշային հետ:

ՋԱՅՆԵՐ. — Երեսփոխան էֆէնդին ալ անդամ կառաջարկենք:

(Ընդհանուր հաւանութիւն)

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Ուրեմն յանձնախումբն ընդունուած է. կը մնայ գիտնալ թէ Ուղերձը խմբագրուելէ ետև պիտի ներկայացուի ի՞նչ հոս խորոյն կողմնակցութեամբ և ստորագրուելու համար, և թէ երեսփոխաններէն Ուղերձը մատուցանողներ որո՞նք պիտի ըլլան:

ՍՐԱՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ. — Ես կառաջարկեմ որ ժողովը խմբովին ներկայանայ և մատուցանէ ուղերձը Վեհափառ կայսեր:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Բաց ցոյց մասին նախարարաց կարծիքն ու հաճութիւնն տանուհարկ կըլլայ կարծեմ:

ՍՐԱՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ. — Եստ ասկէ, կը հարցնենք նախարարաց, եթէ չենք, այն ատեն անանձին կողմէնք ուղերձը:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Ուրեմն կընդունիք որ ուղերձը պատրաստուի ստորագրուի երեսփոխաններէն, և նախարարաց հարցուելէ ետև եթէ չենք, անանձինն ուղերձը դիտուի Նորին Վեհափառութեան: Մէկ կողմէ թող երեսփոխանական ուղերձը պատրաստուելու վրայ ըլլայ:

միտ կողմէ ես կառաջարկեմ որ մտքաբարտարիս բարոյններն և և դաւանաց ատկորդներուն ալ պաշտօնական շնորհաբարութեամբ մը ծանուցուի այս նոր դէպքը:

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Խմբագրութեք ուղերձը մէծ նշանակութիւն ունի, անոր համար հոս ժողովիս մէջ չկարողացուած կայսեր մատուցանել ասկէ չըլլար: Արտուի թէ յատկիկաց հինգ շաբաթի օր նորնախի կայսեր սուր ընդ մէջ ամէկու տարազութիւնը պիտի կատարուի, ուրեմն յատկիկաց ուրբաթ օր կանուխ կրնանք նիստ մը ընել ուղերձը կարգադրու համար, և եօջն օրը ի միջօրէի կամ հետեւեալ շաբաթ օրը մատուցանել:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Ուրեմն կառաջարկէք որ ուղերձը ժողովը կարգացուի և այնպէս մատուցուի:

ԻԵԹԻԻՃԵԱՆ Կ. ԷՖ. — Հաւանականութիւն կայ որ երբ Սրբազան Պատրիարքը նախարարաց կարծիքն հարցնէ, ուղերձը տեսնել, ուղեն, այս կէտն ալ մտածել հարկ է:

ԵՆՈՒՍՈՒՅԵԱՆ Տ. ԷՖ. — Ես իբր ակր առաջարկութեամբ, պէտք է որ բացատրեմ թէ ի՞նչ կերպով ըմբռնուած եմ զայն: Այս տեսակ պարագաներու մէջ սովորութիւն է որ խմբագիր մասնաժողով մը իւր գրածը կներկայէ ժողովին, սակայն այս խմբագրութեան ուղերձին տղին ինչ պիտի ըլլայ՝ գիտենք արդէն, զի տրիշ բան չը պիտի սրբանակէ, բայց եթէ շնորհաբարութեամբ Վեհափառ ինքնակողմն դահախարութեան և այն Սահմանադրութեան՝ զոր կհաստատուաց նորնախի գահակալը, ներկայացնելով նաև ինչ յոյս որ ունինք այս մասին:

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Պէտք է ժողովը խմբովին գիտնայ և իմանայ մատուցուելիք ուղերձին պարունակութիւնը:

ԵՆՈՒՍՈՒՅԵԱՆ Տ. ԷՖ. — Այժմ կուզէք Մասնաժողովին բացատրեցէք թէ ի՞նչ կերպով պիտի խմբագրէ. նոյնպէս եթէ կուզէք Մասնաժողովին վրայ մէկ երկու անգամ ալ յանուցուցէք:

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Ուղերձը խմբովին ներկայացնել առաջարկուեցաւ. ըստ իս խմբովին ներկայացման հարկ չկայ, ժողովը պատգա

մատարութիւն մը պէտք է ընտրէ ընդ առաջնորդութեամբ Սրբազան Պատրիարք Հօր և Առեւտարեա փաշային մատուցանելու համար, եթէ խմբովին ներկայացնել որչափ, ևս չեմ կրնար ընկերանալ, հերիք է որ պիտի ստորագրենք ամենքս և պիտի կներկայ ուղերձը, ի՞նչ հարկ թէ՛ ստորագրել և թէ՛ չպիտի տանիլ: Ուստի ես կառաջարկեմ որ յատկիկաց երեքշաբթի կամ չորեքշաբթի օր ժողովը գումարի խմբագրու ուղերձը տեսնելու և ստորագրելու համար, և միանգամայն բանի մը անձանցմէ պատգամաւորութիւն մը կազմուի, անոր միջոցաւ ուղերձը դրկելու համար:

ՆՈՒՐԵԱՆ Յ. ԷՖ. — Արդէն հոյ աղբ Նորնախի Վեհափառ Սուլթանին իւր շնորհաբարութիւններն ըրած է Սրբազան Պատրիարք Հօր բերնովը, շնորհակալ ըլլալու ենք Նորին Սրբազանութեան՝ որ Արդին փառք բերելու կերպով հատուցած է իւր այս պարտքը:

(Չայներ. — Այս)

Հիմա այս գործին աւելի կերպարարութիւն մը տալու մտք երեսփոխանութեան կողմէ ուղերձ մը ներկայացնելու խնդիր կ'յարուցուի:

Պէտք չէ մոռնալ որ Սուլթանին մէջ մեծ յեղափոխութիւն մ'է այս դէպքը, յեղափոխութիւն՝ որոյ նմանը թերեւս տեսնուած չէ ցարդ Օսմանեան տէրութեան մէջ, աղբային երեսփոխանութիւնն ալ այս մեծ խնդրոյն առջև կը կանուխ, որոյ հետեւանք չգիտենք թէ ի՞նչ է. վերջուպէս յղի կին մը՝ որ չգիտենք թէ ի՞նչ պիտի ծնամի. միտ կողմէ խել մը արածուութիւններ ունինք Վեհ. Սուլթաններու կողմէ սրբուած մեզ. չգիտենք թէ նոր Սուլթանն ի՞նչ արածութիւն կուտայ կամ թէ կառուու մենէ. ստոր համար մեծ զգուշութիւն պէտք է ընել, միայն բառերով չխաղալ, այլ ըստ կշիռի և զիտնալ թէ ի՞նչ է ուղերձին, ի՞նչ է տալիքին և ի՞նչ անելիքին. սեպէ թէ տեսակ մը դաշնագրութիւն կըլլայ կոր Սուլթանին և մեր մէջ. իսկա մը նոյնպէս բան մը կուտայ և բան մը կրանէ կոր: Բանի որ խորովի կառաջարկուի տէնարը մը ընել, ուղերձի մը միջոցաւ, սէտք է կըսեմ՝ կշիռ անոր ամեն մէկ բառերը, զի այս ժողովն 3-4 միլիոն խեղճ աղբ մը կներկա

յայնէ, պէտք չէ անապարել, այլ հասուն կերպով գիտնալ պէտք է տուածնիս և առածնիս:

Ուստի կառաջարկեմ ԱՅ օր միջոց տալ մասնաժողովին, որ ըստ մը խորհելէ ետև իւր խումբագրածը բերէ, և հոս ալ ուղարկութեան անուելէ ետև Վեհ. կայսեր մատուցուի:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Հսեցիք Սրբազան Հօր առաջարկութիւնը և Նուրեան էֆէնդիի ըսածները. կնկատեմ որ խնդրոյն մէջ կերպարանախօսութիւն մը մտաւ, Սրբազան Հօր առաջարկութիւնն էր մի միայն խնդակցութեան յայտարարութիւն մը ընելու մտք ուղերձ մը խմբագրել, և բարեարտութեամբ մը ըստ թէ նոյն ինքն երեսփոխանական ժողովը խմբովին ներկայացնէ այս ուղերձը. բայց հիմա խնդիրը փոխուեցաւ, մէկ բանի երեսփոխանաց խօսքէն կանանեմ որ խնդրոյն աւելի կարեւորութիւն մը կտրուի, ալ խարհապարական նկատուած մէջ կը բերուի, և կառաջարկուի մեր աղբին դիրքը ըստ կշիռի և մեր ապագան մեր ձեռքը չը կու պել: Եթէ մեր մատուցանելիք ուղերձին հոգին այսպէս է և այսպէս կուղուի որ ըլլայ, բնականապէս շտապել պէտք չ'է, և ես յատկ կանցնիմ ըստ նաև թէ առ այժմ բնաւ ուղերձ տալ պէտք չէ, այլ սուսեւ գործոյ ընթացքին, տեսնել նախ Նորնախի կայսեր օրով ըլլալիքն և սարս թէ՛ գործով և թէ՛ բանիս. մեր կողմէ պէտք եղած յայտարարութիւններն ընել: Իսկ թէ որ Սրբազան Հօր ըրած առաջարկութեան ոգոյն համեմատ պիտի ընթանանք, այն ատեն ընդ խնդակցութեան դիր մը կը բաւականանայ:

ՆՈՒՐԵԱՆ Յ. ԷՖ. — Աստղ ալ կարոտութիւն չէ մնացած, Սրբազանը խիստ փառաւոր կերպով կատարած է զայդ:

ՍՐԱՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ. — Ենթադրուած եմ որ իմ ըրած պարզ առաջարկութիւնս այսչափ կարեւորութիւն ստացաւ. ձեր կողմէն. կարծեմ թէ ալ ժամանակ է մեր ցուելը բացարձակորէն յայտնել Օրոտտախառ Վեհափառին, ըսել որ մեր աղբն այսբան տարուան հաւատարիմ հը պատահին է մեծաղբ տէրութեան, և նորա ցուց ցուակից և ուրախութեանցն ուրախակից եղած է. և թէ մեր ալ իրաւունք ունինք հոգէն:

իրաւունք ունինք դանձին և իրաւունք նաև խոստացեալ աղատութենէն : Այս նորատակաւ առաջարկեցի երեսփոխանութեան խմբովին ներկայանալ կայսեր :

Ատնք ես չեմ միայն առաջարկող , երեսփոխաններէն անմաք ալ եկան ինձ առաջարկեցին . Ժողովոյդ կ'մնայ որոշել ինչպէս և արժան կըլտար :

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Բ. ԵՑ .— Բանի որ յանձնախումբը կողմեցինք , կարծեմ թէ յանձնախումբին անդամները կարող են խորհի այս պարագաներուն վրայ , և ըստ այնմ իրենց խումբագրութիւնը պատրաստելով բերել Ժողովի ուղղութեան և խորհրդածութեան յանձնել :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ .— Իբրևն եթէ Ժողովը կհաճի , գոյեմք այս խնդիրը , յանձնախումբին թողով մեր հրատարակաւ խորհելիքները խորհել և որոշել թէ ինչ կերպիւ ուղերձը խմբագրել պէտք է , և պէտք է մի խմբագրել :

ԲԱԶՄԱԹԻՒ ԶԱՅՆԵՐ .— Այո , այո :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ .— Կը մնայ յանձնախումբին անդամներն անուանել , և կարծեմ 7 անգամ կրտէ :

Գիւանին առաջարկութեան վրայ ժողովը յանձնախումբին անդամ անուանեց

- Ատենապետ Փաշա
- Ապրո Սահակ էֆէնտի
- Նուրեան »
- Շահարաղ Կ »
- Երասմիեան »
- Քարաղեան Զ . »
- Փախաղեան Ս . »

Այն յանձնախումբին պաշտօն տաճանուեցաւ մտածել թէ պէտք է ուղերձ մը մատուցանել կայսեր ի դիմաց Երեսփոխանաց , և եթէ պէտք է ինչ կերպով արժան է խմբագրել ուղերձը , և խմբագրեալը բերել Ժողովոյս կարելի եղածին չափ շուտով :

Ատենապետ փակելէ առաջ Ատենապետ Փաշան ծանուցանելով թէ մի քանի գրութիւնք կան դիւանին մատուցուած , հետզհետէ ներկայացուց զանոնք Ժողովին , որք են .

1 .

Հրատարակիր Առաջնահան էֆէնտի

Այն հրատարակիրը կարդացուեցաւ , որով Առաջնահան էֆ . հրատելչա կուտայ Բ . Ատենապետութեան պաշտօնէն , զոր ընտրուած էր նախորդ նստին ներկայ տարեկան շրջանին համար :

Ժողովն ընդհանուր բուհով անընդունելի դատեց այս հրատարականը , և թէ Առաջնահան էֆ . պղծեց բուհով որ նախորդ շրջանի ատենապետութեան պաշտօնը կատարած է արդէն դուքէ պակասութիւններով . սակայն իւր թախանձանքն անլուելի մնաց Ժողովն :

2 .

Գրաւոր Առաջարկութիւն Փախաղեան էֆ . Ի

Այն գրաւոր առաջարկութիւնը կարդացուեցաւ , որ է .

Ասեմախոյլ Փաշա

Ատենապետ Աղբ . Ժողովոյ

Ինչպէս բերանացի , նոյնը գրաւոր կատարելով կազմել յանձնախումբ մը , որ պաշտօն ունենայ Նախագահ Արքայանին Ժողովս բանալու ստիւիւ ըրած ատենադատութեան ի պատասխանի ուղերձ մը խմբագրել . յորում Ս . Հօր ատենադատութեան խմբագրի վրայ Ժողովին կարծիքը բացատրուի , և այդ ուղերձը մատուցուի Ն . Արքայութեան :

Այս առաջարկութիւնս թէ իբրև կանոնադրական պէտք ստիւտողական կը համարվի , և թէ մանաւանդ Ն . Արքայութեան այս անգամի բացման ատենադատութեան պարունակած բննադատութեան արժանի կէտերը բացատրելու համար յոյժ կարևոր կը դատվի :

21 մայիս 1876 Ս . Գ . Գ . ՓԱՓԱԶԵԱՆ

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ .— Եթէ Ժողովն այս առաջարկութիւնը նկատողութեան արժանի կը համարի , հարկ կըլլայ մեզ յղել զայն Նախաքննութեան դիւանին :

Զայս բուհով ատենապետ Փաշան բուհի գրաւ , և 18 բուհով ընդդէմ 16ի նկատառութեան աննելու արժանի դատուեցաւ :

3 .

Գրաւոր առաջարկութիւն Ռուսիեան էֆ . Ի

Ատենապետ Փաշայի առաջարկութեան վերայ , ատանց կարդացուելու ՈՐՈՇՈՒՆԵՑԱԻ ատենապետութեանս մէջ անցնել և յաջորդ նստին թողուլ նաև այն գրաւոր առաջարկն :

ԳԼՈՒԾ

ԹԱՂԱԿԱՆ ՄԱՏԱԿԱՐԱՐՈՒԹԵԱՆ

Ա . Թաղային Ժողովք .

Յօդ . 1 .— Թաղերը ներկայացուել են իւրաքանչիւրն իր եկեղեցւոյ ժողովրդէն ընտրեալ Թաղային ժողովով մը , նախագահ ունենալով Թաղին Քարողիչը կամ Աւագերէցը : — Այն ժողովին միջնորդութեամբ կը հսկէ իւրաքանչիւր թաղ իր տանձին մատակարարութեանը վրայ :

Յօդ . 2 .— Թաղային Ժողովները պատգամ ունին իւրաքանչիւրն իր թաղին տարեկան պիւտճէն ստեմանելու , Թաղ . Խորհուրդն ընտրելու , անոր մատակարարութեան տարեկան համարը պահանջելու և ըստ հարկին երբ և ըլլայ զանի հարցապնդելու իր գործողութեանց մէջ , և վերջապէս իր ձեռնհասութեան ենթարկեալ ամեն թողական ինդիւր յանուն թաղին լուծելու :

Յօդ . 3 .— Թաղային Ժողովները կը պարտին թաղին տարեկան վիճակագրութիւնը համառօտի հաղորդել իրենց կեդրոնին վարչութեան , յայտնելով միանգամայն թաղական գործոց և մատակարարութեան բարոքման համար իղձերնին՝ եթէ ունին՝ որում ըստ արժանւոյն կը պատասխանէ վարչութիւնը :

Յօդ . 4 .— Թաղային Ժողովները կը բաղկանան 30 տկան անգամէ որոց 3 ը բաճանայ (եթէ կայ) , և երեք տարին անգամ մը մէկ

երրորդով կը վերանորոգվին : — Առաջին անգամ վիճակը կորոշէ երեք վերանորոգելի խումբերուն կարգը :

Երբ երեք անգամ ստիւի Ժողովն , անմիջապէս անոնց յաջորդ կընտրվի :

Բ . Բնորոշիւն բարային ժողովականաց

Յօդ . 5 .— Ամեն Հայ իր թաղին մէջ ընտրող է 25 տարեւոր և ընտրելի 30 տարեւոր , անի որ կարգաւ գրել գիտէ ու թաղական ծախից աղքատէս կը մասնակցի ըստ կարողութեան :

Ա . Զրկեալ է ընտրական իրաւունքէն անի որ դատաստանապէս գրկեալ է իր ընկերական իրաւանց փայելու մէջ , կամ խելագարութեան պատճառով անբուական դատված է :

Բ . Արգիլեալ է ընտրական իրաւունքէն անի որ ազգային ատենաներու կողմէն ստեմանայ բուհի պիւտճէն դատասարտեալ է կամ հալւոր պատժի մը տակ է : — Այս արգելքը կը վերնաց երբ պատժին ժամակեալը լրանայ :

Յօդ . 6 .— Առաջին անգամին կամ երրորդ Թաղ . Խորհուրդ չը կայ՝ Թաղին առաւելագոյն հանգանակողներէն 10 հօգի , եթէ Խորհուրդ կայ՝ նոյն կարգի անձանցմէ 5 հօգի Խորհուրդին հետ միանալով , ընտրողական ատեան կը կազմեն Քարողիչն կամ Աւագերէցին հրատարակուող նախագահութեամբը և կը հսկեն ընտրական գործողութեանց ըստ կանոնի :

Ներկայման ցանկը՝ որ սրբապրելի է՝ հաւասար թուով կը բաւէ :

Յօդ . 7 .— Ոչ ոք ընտրեալ է առաջին բուհարկութեամբ եթէ շատանց բուհարկուայ թիւին կհսէն աւելի բուհ՝ երբու ընտրողաց մեծամասնութիւնը բուհի մասնակցած է :

Իսկ երկրորդ բուհարկութեան մէջ համեմատական առաւելութիւնը կը բաւէ : — Ամենայն բուհարկութիւնս առաջին թէ երկրորդական՝ որում ընտրողաց բաւորը գոնէ չէ մասնակցած , իբրև անբուական անմասեր է և կըրկնել կը հարկաւորի :

Յօդ . 8 .— Ընտրութեանց վաւերացման իրաւունքը թաղային ժողովին է , որում կը դիմեն գրութեամբ տարբինաւորութեան դիտողութիւն կամ գանգատ ունեցողները :

Թաղային ժողովն յետ վաւերացման կեղ-
րոնին կը ծանուցանէ կատարված ընտրութիւնը:

Յոյ. 9 — Թաղային ժողովները ամեն տարի
յունվարի մէջ կը փակվին, և ընտրութիւնք՝ ե-
թէ կան՝ փետրվարի մէջ կատարվելով մարտի
սկիզբը նորէն կը բացվին:

Գ. Մասնատր տրամադրութիւնք:

Յոյ. 10 — Ա. Այն թաղն որ գտնէ 30 ընտ-
րելի չունի՝ անբաւական համարվելով՝ մասակայ
թաղի մը հետ կը միանայ մասակարարացէս թա-
ղային ժողով կազմելու համար:

Բ. Նաև այն թաղերն որ արդէն բաւական
գոյով կազմեն միացնել կարողութիւննին մերձա-
կայ թաղի մը հետ՝ աւելի կարևոր ու արդիւ-
նաւոր մասակարարութիւն մը կազմելու հա-
մար, ազատ են միանալու փոխադարձ հաճու-
թեամբ:

Գ. Իսկ այն թաղին մէջ որ անբաւական
գոյով չունի զխրութիւն միանալու, ընտրելիք
քանի ալ ըլլան՝ 30 էն պակաս՝ Թաղ. խոր-
հուրդ մը կը ձևորեն և իրրե Թաղային ժողով
համարաւու կըլլան նոյն խորհուրդին մասակա-
րարութեանը:

Դ. Թաղական խորհուրդք:

Յոյ. 11 — Թաղ. խորհուրդոց պաշտօնն է
Թաղային գործոց և հաստատութեանց մատու-
կարար հոգաբարձութիւնը:

Պարտք ունի անհրաժեշտ ամեն Թաղական
խորհուրդ, նախ՝ իր թաղին նախնական ուս-
մանց կանոնաւոր վարժարանն ունենալու թէ
մանչ և թէ աղջիկ մանկանց համար, երկ-
րորդ՝ իր թաղին ազգահամարի երեք գիրքերն
ունենալու, ծննդոց, պսակաց և վախճանաց,
նոյնպէս և հանգանակութեան տօմար մը. եր-
րորդ՝ ապրիլին կըցածին չափ միայն քահա-
նայ և վարժապետ պահելու և պահածներուն
կացութիւնը կանոնաւոր ապրուստով արժանա-
պէս բարւոյրելու:

Թաղ. խորհուրդները ոչ միայն թաղային
ժողովոց մասակարար իշխանութիւնը կը վարեն
այլ և կեդրոնէն եկած ընդհանրական անօրէ-
նութիւնքն ու հրահանգները թաղին մէջ դար-

ձաղրելու պաշտօնն ու սրարտաւորութիւնն ու-
նին միւտ ընդ հսկողութեամբ Թաղային ժող-
ովոց:

Յոյ. 12 — Թաղ. խորհուրդները կը բաղ-
կանան 5 անան անդամէ: Մէկ հոգաբարձու և
կեղեցոյ միանգամայն և տնտեսկաց, մէկ հո-
գաբարձու փորձատան, մէկ հոգաբարձու կալ-
ուածոց միանգամայն և յարաբերութեանց, մէկ
հոգաբարձու սնտուկի կամ համարակալ կամ
նօտար միանգամայն և ընտանեկան վէճերու
մէջ իրաւարար (1):

Անձնիւր հոգաբարձու իր մասին մէջ յստ-
կապէս ձեւանա՞ս խորհուրդից ունի իրեն իր
միւս չորս պաշտօնակիցները, որք ի խորհրդի
կորոշեն սակեանց կարևոր տնօրէնութիւն և
համերաշխապէս պատասխանատու են Թաղա-
յին ժողովին առջին, որում կը պարտին ներ-
կայել ամեն տարի մասակարարութեան հաշիւու
Իսկ մանրամասն գործոց առանձին տնօրէնու-
թեան մէջ անձիւր հոգաբարձու ինքն է պա-
տասխանատու:

Ե. Ընտրութիւն Թաղ. խորհուրդոց:

Յոյ. 13 — Ամեն Թաղ. խորհուրդ իր
թաղային ժողովին կը ընտրվի բուէից բացարձակ
առաւելութեամբ՝ անգամոց պաշտօնը նշանա-
կեալ հնգամուս ցանկի մը վրայ զոր նախագահ
և զիւան խորհրդակցութեամբ կը պատրաստեն:

Եթէ Ժողովն այս ցանկը չընդունի, երկ-
րորդ ցանկ մ'ալ կը պատրաստվի հարկաւոր
դատված փոխտնութեամբ. եթէ այս ալ չըն-
դունվի, ժողովն իր անդամներէն երկու հոգի
ալ կաւելցնէ ցանկը պատրաստելու գործողու-
թեան մասնակից և այս երրորդ ցանկը պարտա-
ւորապէս ընդունելի է:

Թաղային ժողովը կը ծանուցանէ առաջնոր-
դին Թաղ. խորհուրդին կազմութիւնը զոր ա-
ռաջնորդն իր կոնդակալ կը հաստատէ:

Յոյ. 14 — Թաղական խորհուրդի մ'ան-
դամ չը կրնար միանգամայն Թաղ. ժողովին
ալ անդամ ըլլալ. եթէ ընտրվի, մէկէն կամ
միւսէն պէտք է հրաժարի:

(1) Այս հոգաբարձուն ստիւրարար քահա-
նայ է:

Յոյ. 15. — Թաղ. խորհուրդներ իրա-
ւունք ունին և սրարտաւորութիւն Թաղ. ժող-
ովն նիստերուն ներկայ գտնելու պէտք եղած բա-
ցատրութեանց ու հարցմանց պատասխանելու
համար. բայց վիճարանութեանց մէջ ձայն ու-
նին միայն և ոչ բուէ:

Յոյ. 16 — Թաղ. խորհուրդն իրաւունք
չունի սահմանեալ տիւճէն զուրս ծախք կամ
պարտք բնելու տօմոց Թաղային ժողովին ար-
տօնութեանը: Իսկ այնպիսի պարտք մը կրնե-
լու համար որոյ զուսմարը թաղին տարեկան
հասոյթին համեմատութեամբ հորիւրին քսանը
կանցնի՝ նոյնպէս և թաղական կալուածի մը
վաճառման համար՝ Թաղային ժողովը չկրնար
արտօնութիւն տալ առանց իւր կեդրոնին Տըն-
տես. խորհրդոց գիտութեան, և հաւանութեան
Աղգ. ժողովին եթէ Պօլսի մէջ է թաղը կամ
Գաւառ. ժողովին եթէ գաւառին մէջ է:

Յոյ. 17 — Թաղ. խորհուրդք 3 ասարկան
համար ընտրված են, և մինչև նորը չընտրվի
և թաղին հաշիւը երկուստեք ստորագրեալ վի-
ճակացոյցով մը չաւանդէ նորին՝ հինը չը կրնար
քաշվիլ: — Ելլող անդամք վերընտրելի են:

Յոյ. 18 — Եթէ Թաղ. խորհուրդէն ան-
դամ պալտի մը և է պատճառով, Թաղ. ժո-
ղովն անմիջապէս կրնարէ անոր յաջողքը: —
Սոյն սրարագային մէջ՝ եթէ խորհուրդին մեծա-
մասնութիւնը խորեալ չէ, մնացող անդամք կը
կը սրարատան ներկայման ցանկը երկարատիկ
թուով զոր Թաղային ժողովը կը վեղչէ:

Սրայիւնք քուէնամարի ընտրութեան Նա-
խաքնելի դիւանաց:

Ատենապետ փաշան՝ Նախաքննիչ զիւանայ
ընտրութեան համար պահ մը առաջ սկսուած և
քննչաց միջոցաւ շարունակուած քուէհամարին
արդիւնքը քննչաց կողմանէ ստորագրեալ և զի-
ւանին մատուցուած ըլլալը յայտնելով, կարգաց
դայն և հրատարակեց ժողովին, որ է:

Ձեռն-ՀԱՍՈՒԹԵԱՆ ԴԻԻԱՆ

Տ. Յովհաննէս Բ. Մկրեան	բուէ 48
Տ. Գրիգոր	» Աճէմեան » 60
Սարգիս էֆէնտի Աղաբէկեան	» 44

ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԴԻԻԱՆ

Յովհաննէս էֆ Նուրեան	բուէ 60
Գէորգ	» Ստիվարանեան » 48
Պօղոս	» Պատնասեան » 37

ԿԱՒՈՒԱՅՈՅ ԴԻԻԱՆ

Յովհաննէս էֆ Սղնուսորեան	» 61
Սահպան	» Պէլլիկճեան » 61
Յակոբ	» Քաղապեան » 58

ՅԱՐԱԲԵՐՈՒԹԵԱՆ ԴԻԻԱՆ

Տիգրան	» Եստաֆեան » 61
Օդէն	» Խօճասարեան » 61
Նազարէթ	» Շահապեան » 61

ՀԱՄԱՐԱՅԱՒՈՒԹԵԱՆ ԴԻԻԱՆ

Համբարձում էֆ Մադալուեան	բուէ 60
Եղիազար էֆ Մելիքեան	» 61
Յարութիւն	» Մէրեկճ-Գուլի » 40

ԻՐԱԿԱՍՈՒԹԵԱՆ ԴԻԻԱՆ

Տ. Ներսէս Վ. Ասլանեան	բուէ 45
Կարապետ էֆ Շահապեան	» 46
Նւան	» Քաղապեան » 34

ՆԱԽԱՁԵՈՒՆՈՒԹԵԱՆ ԴԻԻԱՆ


Միքայէլ	» Մամիկոնեան » 61
Ռուսինեան	» » 44
Առտրէլ	» Ամբունեան » 34

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԴԻԻԱՆ

Կարապետ	» Իսթիճեան » 59
Պետրոս	» Քէրէտոնեան » 46
Ստեփան	» Փախապեան » 44

Հեռեւապէս այն ընտրութիւնը վաւերացաւ
Ժողովին, և ընտրեալք Նախաքննիչ զիւանայ
անգամ հոչակուեցան:

Ատենաը դոցուեցաւ ժամն 10 1/2 ին:
ԱՏԵՆԱԴՊՈՐ ԱՏԵՆԱՊԵՏ
Գ. Տ. ՄԵԼԻՔԵԱՆ Ս. ԱՐԱՍԵՆԱՆ



Faint, illegible text on the left page, likely bleed-through from the reverse side.

Faint, illegible text on the right page, likely bleed-through from the reverse side. The page is framed by a decorative border with floral motifs in the corners.

ԳԻՆ 2 ՂՐՈՒՇ

ՄԵՓԱԿԱՆՈՒԹԻՒՆ ՊԵՂՄԱԿԱՆ ՍՆՏՈՒԿԱՆ

ՍԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՅ ԵՍԵՍԻՅ ՅԱՏԿԱՅԵԱԼ

Կը ծախուի ի Գիւանատան Պատրիարքարանի . և Գալաթիոյ Ս
Լուսաւորիչ Եկեղեցւոյ բանկայը . և Հոյ գրախանատաց քով :